Ալեքսանդր Ծատուրյան

Հոգիս մռայլ . . .

Հոգիս մռա՛յլ, մռա՛յլ իմ երգ
Էլ սիրտ չըկա տանջվելու…
Դուրս եմ եկել ծովի եզերք,
Դարդս ծովին պատմելու…

Ա՜յ ծով անեզր, ա՜յ ծով անհուն,
Ե՛վ դու հուզված ու պղտոր.
Իմ տառապյալ, տանջված հոգուն
Շա՜տ նման ես դու այսօր:

Ա՜խ, լսիր ինձ և ինձ հետ լաց
Տո՛ւր վըշտերիս արձագանք.
Թո՛ղ ցավերով մտերմացած՝
Մե՛կտեղ գտնենք սփոփանք…

Կամ թո՛ղ վիշտս քո վշտի հետ,
Որպես քույրեր երկվորյակ.
Ալիքներում կորչեն անհետ,
Թաղվին պղտոր ջրրիդ տակ…

Հոգիս մռա՛յլ. մռա՛յլ իմ երգ.
Էլ սիրտ չըկա տանջվելու…
Դուրս եմ եկել ծովի եզերք,

Դարդս ծովին պատմելու…

Գուրզուֆ, 1886 թ.